

նշանակէ ճանապարհներու հեռաւորութիւնը, քաղաքներու երեւելի սրբալայրերը, նշանաւոր շինուածքները, նաեւ ժողովուրդներու վարք ու բարքէն եւ նիստ ու կացէն ուշադրաւ եւ զգուշալի գիծեր:

Երկար յամած է կարեւոր կենդրոններու մէջ, այսպէս Կ. Պոլսոյ, Վենետիկի, Հռոմի, Գահիրէի, Երուսաղէմի եւ Լվովի նկարագրութիւնները տուած է շատ մանրամասն, որոնք հետաքրքրական են նաեւ այսօրուան ընթերցողին համար:

Նկատի առնելով Ուղեգրութեանս այս ամէն առաւելութիւնները, անհրաժեշտ համարեցայ ամբողջութեամբ հրատարակել զայն:

Հեղինակը թէպէտ կը պարծի թէ առած է իւր կրթութիւնը «ի վարժարանս Չահաստանի առ ոտս վարդապետաց եւ բանասիրաց», բայց շատ թերաւարժ է ուղղախօսութեան մէջ: Կը գրէ գրարարախառն ուսուցողութիւն: Ականջը լաւ չէ ընդունած հայերէնի նուրբ ձայները: Այս պատճառաւ ալ գործած է անթիւ ուղղագրական, նաեւ քերականական սխալներ: Առ հասարակ շատ զգալի է իր գրչին տակ գրարարի եւ աշխարհարարի կոիւր: Որպէս զի միօրինակ ըլլայ ուղղագրութիւնը, եւ ընթերցանութիւնը չխանդարի քերականական ծանր սայթաքումներէ, կարեւոր դատեցի ուղղել տեղ տեղ անճշտու-